

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՅՈՒԼԻԱՆԱ ԳԱԳԻԿԻ

ՄԻՋԻՆ ԽԱՎՐ ԱՐԴԻ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

ԻԲ.00.03 – «Միջին մակարդակի տեսություններ, սոցիալական կառույցներ, սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝

փիլիսոփայական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր **Լ.Հ. Հարությունյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Ա.Կ. Սահակյան**
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Ս.Ա. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական
հետազոտությունների ինստիտուտ**


Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. փետրվարի 22-ին, ժ. 15:00-ին Երևանի
պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի
013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. հունվարի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝



Ս.Ա. Զարաբյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է վերջին երկու տասնամյակների ընթացքում հայաստանյան հասարակության սոցիալական կառուցվածքի փոխակերպումների հետևանքով ձևավորված միջին խավի ուսումնասիրությանը: Հետխորհրդային Հայաստանի սոցիալական կառուցվածքի փոփոխությունները ունեցել են դինամիկ ընթացք և կրել տարերային բնույթ: Այդ ընթացքում սոցիալական կառուցվածքի և շերտավորման վերաբերյալ իրականացված բազմաթիվ հետազոտությունները նպատակ ունեին վերլուծելու հասարակության բևեռացման գործընթացը, ստորին խավի և վերնախավի ձևավորման առանձնահատկությունները: Ապահովելով հարուստ էմպիրիկ նյութ այդ հետազոտությունները կիրառական կարևոր նշանակություն ունեին աղքատության կրճատման տեսանկյունից, սակայն չէին ենթադրում տեսական հայեցակարգայնացում՝ չէին ապահովում տեսական գիտելիքի կուտակում: Միջին խավի ձևավորումը հռչակվում էր որպես քաղաքական խնդիր, սակայն չէին իրականացվում միջին խավի ուսումնասիրությանն ուղղված հետազոտություններ: Գիտական ուշադրությունից դուրս հայտնված միջին խավի ինքնաբերական ձևավորումը, նրա հիմնական բնութագրիչներն ու գործառնությունները այսօր առավել հրատապ հետազոտության և տեսական իմաստավորման կարիք ունեն:

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը: Սոցիալական կառուցվածքի փոխակերպումը երկրում կատարվող տնտեսական և քաղաքական փոփոխությունների արդյունք է, նաև երկրի հետագա զարգացման գրավական: Բնակչության բևեռացումը, կենսամակարդակի և կյանքի որակի անկումը, գործազրկության կտրուկ աճը էական ազդեցություն ունեցան հետխորհրդային Հայաստանի սոցիալական կառուցվածքի ձևավորման վրա: Պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման չկանոնակարգված գործընթացի հետևանքով մարդկանց փոքրաքանակ մի խումբ սեփականության նկատմամբ լայն իրավունքներ ձեռք բերեց:

Միջին խավի առկայությունը բնորոշ է արդյունաբերական և հետարդյունաբերական հասարակությունների համար: Այն բարեփոխումների սոցիալական հիմքն է և շարժիչ ուժը, ապահովում է տեխնոլոգիական և սոցիալ-տնտեսական առաջընթաց, նպաստում է որակավորված աշխատուժի վերարտադրությանը, ստեղծում ու տարածում է սոցիալական արժեքներ և նորմեր, յուրացնում և տարածում է նորարարական կենսագործունեության ոճերը՝ հանդիսանալով հասարակության «ողնաշարը»: Մեծաքանակ միջին խավի բարեկեցությունը երաշխավորում է հարկային միջոցներով բյուջեի համալրումը, որն իր հերթին հնարավորություն է տալիս ապահովելու հասարակության անպաշտպան շերտերի սոցիալական աջակցությունը:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է այն փաստով, որ ժամանակակից հայաստանյան սոցիալական կառուցվածքի ձևավորումը տեղի է ունեցել տարերայնորեն և անվերահսկելի. առանց պետության նպատակային

միջամտության հասարակության մեջ ուրվագծվել է այնպիսի հատված, որն իրականացնում է հասարակության հավասարակշռման և ներդաշնակեցման միջին խավին հատուկ գործառույթները: Պետությունը չի մշակում միջին խավի ձևավորման և ամրապնդման ռազմավարություն, նրա զարգացմանն ուղղված քաղաքականություն: Այդ իսկ պատճառով հրատապ գիտական խնդիր է պարզաբանել Հայաստանում միջին խավի ձևավորման գործընթացի առանձնահատկությունները, վերլուծել ձևավորված միջին խավի բնութագրիչները և հիմնական գործառույթները, առանձնացնել միջին խավի ցուցիչները, բացահայտել միջին խավի կայունությանը խոչընդոտող գործոնները, ժամանակակից հայաստանյան հասարակության մեջ տարրալուծման ռիսկերը և մշակել այն միջոցառումները, որոնք կնպաստեն միջին խավի ձևավորմանը, պահպանմանը և զարգացմանը:

Ժամանակակից հայաստանյան սոցիալական կառուցվածքի նմանատիպ վերլուծությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն: Հասարակության մեջ միջին խավի տեսակարար կշռի, արժեհամակարգի, ապրելակերպի, սոցիալ-տնտեսական, քաղաքական և քաղաքացիական դիրքորոշումների բացահայտումը հնարավորություն է տալիս ուրվագծելու սոցիալական շերտավորման ապագա պետական ռազմավարությունը և ապահովում է սոցիալական կառուցվածքի ձևավորման գործընթացի կառավարման նպատակային արդյունավետ քաղաքականության մշակման հիմք:

Այսպիսով, հայաստանյան միջին խավի ձևավորման և գործառնման առանձնահատկությունների համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս ոչ միայն բնութագրելու այն որպես սոցիալական միավոր, այլև գնահատելու հայաստանյան հասարակության զարգացման գործում վերջինիս դերն ու հնարավորությունները, որը և պայմանավորում է տվյալատենայնությունն արդիականությունը:

Հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը: Միջին խավի հանդեպ հետազոտական հետաքրքրությունն առկա էր դեռևս հնագույն ժամանակաշրջանում՝ սոցիալական անհավասարության հիմնախնդրի ուսումնասիրության շրջանակում: Անհավասարության հիմնախնդրի քննարկումը շարունակվեց նաև Վերածննդի ժամանակաշրջանում և շարունակվում է նորագույն ժամանակաշրջանում:

Սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության գործում հիմնարար նշանակություն ունեին Պլատոնի և Արիստոտելի հայացքները, որոնց հիման վրա հետագայում Կարլ Մարքսը մշակեց սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման դասակարգային մոտեցումը: Մարքսը համարում էր, որ դասակարգային տարբերությունները պայմանավորված են արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերություններով: Միջին խավի ուսումնասիրության դասակարգային մոտեցումը զարգացրին Ռ. Դարենդորֆը, Է. Ռայթը և ուրիշները:

Դասակարգային մոտեցումն էական փոփոխություններ կրեց Մաքս Վեբերի աշխատությունների շնորհիվ. նա համարվում է շերտային մոտեցման

հիմնադիրը: Ս. Վեբերը դասակարգերի հետ մեկտեղ քննարկում էր կարգավիճակային խմբերի և քաղաքական կուսակցությունների տեղը և դերը հասարակության սոցիալական կառուցվածքում: Վեբերի մոտեցումը հետագայում համալրվեց Կ. Դեյվիսի, Ու. Մուռի, Ֆ. Պարկինսի, Թ. Պարսոնսի, Պ. Սորոկինսի աշխատությունների շնորհիվ, որտեղ սոցիալական խավերը դիտարկվում էին ֆունկցիոնալիստական տեսանկյունից: Այնուհետև զարգացավ միջին խավի ուսումնասիրման նորվեբերյան մոտեցումը, որը զարգացրին Ռ. Քոլլինզը, Գ. Քոուլը և այլ սոցիոլոգներ:

Հետագայում ֆենոմենոլոգիական մոտեցման շրջանակում ձևավորվեց միջին խավի ուսումնասիրության սուբյեկտիվ մոտեցումը, որը կիրառել են Ու. Ուորները, Ռ. Սաունդերսը և այլք:

Միջին խավի ուսումնասիրման խորհրդանշական մոտեցման հիմքը դրվեց Դ. Բեյլի, Պ. Բուրդյեի, Ի. Վալերշտայնի աշխատությունների շնորհիվ: Նրանք հատուկ ուշադրություն էին դարձնում միջին խավի մտավոր կապիտալի ուսումնասիրությանը:

XIX դարի վերջին տարածում ստացան միջին խավի էմպիրիկ հետազոտությունները: Ս. Արչերը, Դ. Բլոն, Ս. Բլումինը, Ս. Հալբվաքսը և մյուսներն իրենց աշխատություններում ուղղակիորեն անդրադարձան միջին խավի ուսումնասիրմանը:

Խորհրդային հասարակության կառուցվածքը ուսումնասիրվում էր դասակարգային մոտեցման տեսանկյունից: Այն գերակայում էր նաև հետխորհրդային հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունների և միջին խավի ձևավորման գործընթացների ուսումնասիրման ընթացքում: Ս. Անդրեևի, Լ. Բեյսևայի, Վ. Ռադանի, Ի. Եկարատանի, Ս. Ռուսկոնիչի, Տ. Զալավսկայայի, Ռ. Ռիվկինայի, Ե. Իգիթխանյանի աշխատություններում արդեն կարևորվում են շերտային մոտեցման տարրերը:

Հետխորհրդային Հայաստանի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված են Գ. Շահնազարյանի և Հ. Գյուլալյանի աշխատությունները: Գ. Վարդանյանի աշխատություններում անդրադարձ է արված Հայաստանում գիտելիքահեն հասարակության ձևավորմանը:

Միջին խավի ուսումնասիրման տեսանկյունից հարուստ էմպիրիկ նյութ է ապահովել ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, որը պարբերաբար իրականացնում է տնային տնտեսությունների ուսումնասիրություններ (Հայաստանի վիճակագրական տարեգրքեր և «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցներ):

Այդուհանդերձ, միջին խավի ուսումնասիրության առումով սոցիոլոգիայում դեռևս առկա են ինչպես տեսական-մեթոդաբանական խնդիրներ (չկա միջին խավի համապարփակ սահմանում, մշակված չեն միջին խավի ցուցիչները), այնպես էլ էմպիրիկ ուսումնասիրության և սոցիալական քաղաքականության մշակման համար անհրաժեշտ գիտական հիմք ստեղծելու հետ կապված բացեր: Մասնավորապես, չկան Հայաստանում միջին խավի տեսակարար կշռի մասին

տվյալներ, չեն նկարագրված միջին խավի բնութագրիչները և միջին խավի անկայունությունը պայմանավորող գործոնները:

Ատենախոսության նպատակն է վերլուծել Հայաստանում միջին խավի ձևավորման գործընթացը, առանձնացնել միջին խավի հիմնական բնութագրիչները և ուրվագծել զարգացման հեռանկարները:

Ատենախոսության նպատակը ենթադրում է հետևյալ հետազոտական խնդիրների առաջադրումն ու լուծումը.

1. վերլուծել և դասակարգել սոցիալական կառուցվածքում միջին խավն ուսումնասիրող հիմնական տեսական մոտեցումները,
2. վերլուծել հետխորհրդային Հայաստանի սոցիալական կառուցվածքի փոխակերպման գործընթացը,
3. առանձնացնել միջին խավի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները,
4. վեր հանել հասարակության մեջ միջին խավի առկայության սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
5. օբյեկտիվ ցուցիչների և սուբյեկտիվ գնահատականների համադրության միջոցով վերլուծել միջին խավի գործառնության առանձնահատկությունները,
6. առանձնացնել միջին խավի հիմնական բնութագրիչները.
 - ✓ զբաղվածության առանձնահատկությունները,
 - ✓ ապրելակերպի առանձնահատկությունները,
 - ✓ սպառողական վարքը,
 - ✓ քաղաքական դիրքորոշումները,
 - ✓ սոցիալական ինքնությունը,
7. ուրվագծել հայաստանյան միջին խավի վերին և ստորին խորհրդանշական սահմանները և միջին խավի տարրալուծման ռիսկերը,
8. մշակել Հայաստանում միջին խավի ձևավորմանը, կայունացմանը, պահպանմանը և զարգացմանն ուղղված սոցիալական քաղաքականության առաջարկությունները:

Ատենախոսության տեսական-մեթոդաբանական հիմքերը: Ատենախոսության տեսական հիմքը սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության դասակարգային և շերտային մոտեցումների հիմնարար դրույթներն ու եզրակացություններն են:

Ատենախոսական հետազոտության **Էմպիրիկ հիմքն են՝**

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 2006-2011 թթ. տարեգրքերում և 2011թ. «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցում բերված վիճակագրական տվյալները,
2. 2012 թվականին ՀՀ-ում հեղինակի անմիջական մասնակցությամբ իրականացված քանակական հետազոտության ընթացքում հավաքված սոցիոլոգիական տվյալները (ընտրանքի ծավալը՝ 1200 հոգի),

3. 2012 թվականին հեղինակի անմիջական մասնակցությամբ ՀՀ-ում իրականացրած ստանդարտացված հարցազրույցների արդյունքները (ընտրանքի ծավալը՝ 600 հոգի),
4. 2012 թվականին հեղինակի անմիջական մասնակցությամբ ՀՀ քաղաքային և գյուղական մի շարք համայնքներում իրականացված սոցիոլոգիական որակական հետազոտության արդյունքները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում առկա են նորույթ հանդիսացող մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

1. ներկայացված է սոցիալական կառուցվածքում միջին խավի տեղն ու դերը մեկնաբանող սոցիալական տեսությունների տիպաբանությունը,
2. հիմնավորված են միջին խավի ուսումնասիրության գործում օբյեկտիվ ցուցիչների և սուբյեկտիվ գնահատականների համատեղ կիրառման առավելություններն ու ճանաչողական հնարավորությունները,
3. իրականացված է միջին խավի սոցիոլոգիական քանակական և որակական համալիր հետազոտություն, որը հնարավորություն է տալիս վերլուծելու հասարակության սոցիալական կառուցվածքում տվյալ սոցիալական խմբի գոյությունը, հիմնական բնութագրիչները և ինքնանույնականացման առանձնահատկությունները,
4. վերլուծված են Հայաստանում միջին խավի ձևավորման գործընթացի առանձնահատկությունները,
5. վերհանված են հասարակության մեջ միջին խավի գոյության սոցիալ-տնտեսական ցուցանիշները,
6. մշակված են Հայաստանում միջին խավի ձևավորմանը, կայունացմանը, վերարտադրությանը և զարգացմանն ուղղված սոցիալական քաղաքականության միջոցառումների առաջարկներ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական արժեքը սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության դասակարգային և շերտային մոտեցումների վերլուծությունն է, ինչպես նաև հայ հասարակության ուսումնասիրության գործում շերտային մոտեցման կիրառման անհրաժեշտության հիմնավորումը:

Կիրառական արժեք է ներկայացնում կատարված սոցիոլոգիական հետազոտությունը, որը հնարավորություն է տալիս գնահատելու Հայաստանում միջին խավի ձևավորման տարերային գործընթացի արդյունքները, վերլուծելու միջին խավի բնութագրիչները և մշակելու միջին խավի նկատմամբ կիրառելիք սոցիալական արդյունավետ քաղաքականության սկզբունքներ և դրանց իրագործմանն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում: Ատենախոսության հիմնական գաղափարները ներկայացված են գիտական հանդեսներում հրատարակված 5

հողվածներում, ինչպես նաև 2012 թվականին Երևանում կայացած «Իրականության սոցիալական կառուցակցումը. անցումային ժամանակաշրջանում մարդկանց հաղորդակցման մարտահրավերները» միջազգային գիտաժողովում կարդացված զեկույցում: Ատենախոսության հիմնական դրույթները հեղինակը փորձարկել է ԵՊՀ սոցիալական քաղաքականություն և սոցիալական վարչարարություն մագիստրոսական ծրագրով 2011 թվականից դասավանդվող «Աղքատություն և սոցիալական անհավասարություն» առարկայի դասերին:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (10 ենթագլուխ), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ծավալը 174 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀՄՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվում է թեմայի գիտական մշակվածության մակարդակը, առաջադրվում են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեկնաբանվում են աշխատության մեթոդաբանական հիմքերը, հիմնավորվում են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Միջին խավի ուսումնասիրման տեսամեթոդաբանական մոտեցումները»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Հասարակության սոցիալական կառուցվածքը. տեսական վերլուծություն»**, ներկայացվում են սոցիալական կառուցվածքի վերաբերյալ հիմնական տեսական մշակումները՝ դրանց զարգացման գործընթացը և տրամաբանությունը սկսած հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը, վերլուծվում են «սոցիալական կառուցվածք», «սոցիալական դասակարգ», «սոցիալական շերտավորում», «սոցիալական խավ», «սոցիալական խումբ» և «սոցիալական շարժունություն» եզրույթները:

Քննարկելով հասարակության սոցիալական կառուցվածքի վերաբերյալ հնագույն ժամանակաշրջանի մտածողների հայացքները, հեղինակն անդրադառնում է Պլատոնի և Արիստոտելի աշխատություններին: Արիստոտելը սոցիալական խմբերը բաժանում է ըստ նյութական ապահովվածության մակարդակի: Նա առանձնացնում է սոցիալական կառուցվածքի երեք դասակարգային տարր. շատ հարուստ խավ, շատ աղքատ խավ և երրորդ՝ միջին խավ: Վերջինը նա շատ էր կարևորում՝ արդարացիորեն ենթադրելով, որ այն պետությունը, որտեղ միջին խավն ավելի մեծաքանակ է և ուժեղ, ավելի կայուն է և կառավարելի: Իսկ աղքատությունը պետության համար դժվարություններ է հարուցում, քանզի դարձնում է այն անկայուն և դատապարտում կործանման:

Սոցիալական կառուցվածքի վերաբերյալ Վերածննդի ժամանակաշրջանի մտածողների հայացքներն ուսումնասիրելիս՝ հեղինակը առանձնացնում է Ն.

Մաքիավելլիին, ով կանխորոշեց «բաց հասարակության» մասին պատկերացումները: Թ. Հոբբսը առանձնահատուկ կարևորություն էր տալիս մարդկանց միջև հիմնարար հավասարությանը: Իսկ ֆրանսիացի գիտնականներ Օ. Տյերին և Ֆ. Գիզոն ներմուծեցին «դասակարգ» հասկացությունը:

Ենթագլխում մանրամասնորեն վերլուծվում է Կ. Մարքսի դասակարգային մոտեցումը: Հասարակության կառուցվածքի մեջ Մարքսը տարբերակում է երկու հակամարտ (անտագոնիստական) դասակարգեր՝ դասակարգման հիմքում դնելով արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքը, շեշտելով տնտեսական կապիտալի գերակա դերը և դիրքը աշխատանքի հասարակական բաժանման մեջ:

Այնուհետև դիտարկվում է դասակարգային տեսություններից դեպի շերտային տեսություններ անցումը Մ. Վեբերի, Է. Ռայթի, Պ. Բուրդյեի և Պ. Մորոկինի աշխատություններում: Մասնավորապես Մ. Վեբերն առանձնացնում է դասակարգ, կարգավիճակ և կուսակցություն հասկացությունները՝ հիմքում դնելով անհավասարությունը՝ համապատասխանաբար ըստ տնտեսական, սոցիալական և քաղաքական աստիճանակարգման: Այս ժամանակահատվածի գիտական աշխատություններում արդեն հիմնավորվում է շերտավորման մոտեցումը: Նորվեգիայի ուղղությանը հարող տեսաբանների՝ Ռ. Ֆոլինգի, Լ. Ուորների, Մ. Հալբվաքսի աշխատություններում կիրառվում է սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության համալիր մոտեցում: Հատկապես արդյունավետ է այս մոտեցման կիրառումը միջանկյալ դիրքում գտնվող շերտերի սահմանների որոշման գործում:

Խորհրդային Հայաստանի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրություններում գերակայում էր դասակարգային մոտեցումը: Իսկ հետխորհրդային ժամանակահատվածում արդեն ինքնաբերաբար անցում կատարվեց դեպի շերտային մոտեցումը: Ենթագլխում նշվում է, որ արդի Հայաստանում միջին խավի ձևավորման սոցիալ-տնտեսական գործոնների ուսումնասիրության համար առավել նպատակահարմար է կիրառել սոցիալական շերտավորման վերաբերյալ Մ. Վեբերի դրույթները և նորվեգիայի ուղղության սոցիոլոգների հայեցակարգերը: Նորվեգիայի մոտեցումը միջին խավի ընդլայնման հեռանկարների և նրա ստորին և վերին խորհրդանշական սահմանների ուսումնասիրության համար ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում:

Հեղինակի կարծիքով, դասակարգային և շերտային մոտեցումները միմյանց չեն բացառում, այլ փոխլրացնում են հնարավորություն տալով ստանալու հասարակության սոցիալական տարբերակման առավել ստույգ պատկեր: «Սոցիալական խավ» հասկացությունը շերտավորման վերլուծության տեսանկյունից ունի հիմնարար նշանակություն: Այն մատնանշում է, որ սոցիալական խավի գոյության համար էական նշանակություն ունի անհատական գործոնը՝ մարդու վարքագիծը այս կամ այն իրավիճակում, նրա վերաբերմունքը տարբեր երևույթների հանդեպ պայմանավորված այնպիսի չափանիշներով, որոնք օգնում են ինքնաձևանաչմանն ու շրջապատի կողմից նույնականացմանը: Այդ իսկ պատճառով սույն ատենախոսության շրջանակում ավելի

նպատակահարմար է «սոցիալական խավ» եզրույթի օգտագործումը, որը մի կողմից վերլուծական ավելի լայն հնարավորություններ է ապահովում, իսկ մյուս կողմից հնարավորություն է տալիս չսահմանափակվելու արտադրության միջոցների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մարքայան դասակարգային մոտեցմանը հատուկ չափանիշով: Իսկ միջին խավի մասին խոսելիս դա հատկապես է կարևորվում, որովհետև միջին խավն ինքնին հակասում է հասարակության կառուցվածքի երկանդամ ընկալմանը:

Այսպիսով՝ մարքսիստական մոտեցումն առանձնացնում է միջին խավի հետևյալ չափանիշները՝ սեփականություն, իշխանություն և մասնագիտական որակավորում: Նորվեգերյան մոտեցման ներքո արդեն առանձնացվում են կրթական մակարդակը, հեղինակությունը և իրավունքները: Ֆենոմենոլոգիական հարացույցի և հետարդյունաբերական հասարակության տեսության խորհրդանշական մոտեցումները միջին խավի չափանիշները լրացնում են ինքնանույնականացման հատկանիշով, ինչպես նաև սոցիալական, մշակութային և մարդկային կապիտալով:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Միջին խավի բնութագրիչները և գործառնական նշանակությունը»**, ներկայացվում են դասակարգային, նորվեգերյան և շերտավորման մոտեցումների շրջանակներում առանձնացված միջին խավի բնութագրիչները, վերլուծվում են հասարակությունում միջին խավի գործառույթները:

Հեղինակը սահմանում է միջին խավը՝ որպես բնակչության այն սոցիալական շերտերի ամբողջություն, որը ա) ունի մասնագիտական կրթություն և որակավորում, բ) ունի կայուն զբաղվածություն, գ) զբաղվում է մտավոր աշխատանքով, դ) ունի հիմնական աշխատատեղից՝ օրինական աղբյուրներից ստացված որոշակի եկամտի մակարդակ, որն ապահովում է բարեկեցիկ կենսամակարդակ¹, ե) ունի սեփականություն (բնակարան, տուն, փոխադրամիջոց), զ) որի եկամտի չափով և արժեհամակարգով պայմանավորված ծախսերի կառուցվածքի մեջ էական տեսակարար կշիռ ունեն կրթական և առողջապահական ծառայությունները, բնակարանի գնումը, վերանորոգումը կամ կառուցումը, է) ունի առանձնահատուկ ապրելակերպ, ուրույն աշխարհայացք և արժեհամակարգ, ը) ինքնանույնականացնում է իրեն տվյալ հասարակության միջին խավի հետ:

Հեղինակն առանձնացնում է միջին խավի հետևյալ կարևորագույն գործառույթները.

- տնտեսական. միջին խավի շնորհիվ ստեղծվում են նոր աշխատատեղեր, և պահպանվում են գոյություն ունեցողները, ապահովվում է վճարունակ պահանջարկ,
- միջին խավը հիմնական հարկատուն է, որի տնտեսական կարգավիճակից են կախված բնակչության ներդրումային ակտիվությունը, պետական բյուջեի վիճակը, պետական սոցիալական ծրագրերի իրականացումը և մի շարք այլ կարևորագույն սոցիալ-տնտեսական գործընթացներ,

¹ Բարեկեցիկ կենսամակարդակը փոփոխվում է հասարակությունից հասարակություն:

- միջին խավը մեղմում է հասարակական հակասությունները և ապահովում է զարգացման էվոլյուցիոն ընթացքը,
- քաղաքական. միջին խավը երաշխավորում է իշխանության ձևավորված համակարգի կայունությունն ու վերարտադրությունը,
- մշակութային ինտեգրում. միջին խավը պահպանում և տարածում է սոցիալական արժեքները, նորմերն ու ավանդույթները,
- մտավոր առաջընթացի շարժիչ ուժ. միջին խավը տիրապետելով մտավոր կապիտալին՝ տարածում է այն հասարակության մեջ և նպաստում է մտավոր ներուժի կուտակմանն ու զարգացմանը:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Միջին խավի սոցիոլոգիական ուսումնասիրման մեթոդները. քննադատական ակնարկ»**, վերլուծվում են միջին խավի ուսումնասիրության նորմատիվ և հարաբերական մոտեցումները, և հիմնավորվում է սուբյեկտիվ գնահատականների վրա հիմնված ինքնանույնականացման արդյունքների օգտագործումը:

Սոցիոլոգիական տեսանկյունից չափազանց կարևոր է նկարագրել, թե ինչ սոցիալական ամբողջություն է միջին խավը և հասարակության որ մասն է այն կազմում: Սոցիոլոգիական գրականության մեջ առանձնացնում են միջին խավի ուսումնասիրման երկու հիմնական մոտեցում՝

- **նորմատիվ**, որի շրջանակում միջին խավը սահմանվում է արևմտյան հասարակությունների շերտավորման չափորոշիչների համաձայն: Արևմտյան հասարակությունը դիտարկվում է որպես նմուշ (էտալոն), և այլ սոցիալական համակարգերում միջին խավի առկայությունը և տեսակարար կշիռը որոշվում է արևմտյան չափանիշների հիման վրա.

- **հարաբերական**, որը առանձնացնում է միջին խավին հատուկ բնութագրիչներ յուրաքանչյուր հասարակության համար որոշակի ժամանակահատվածում:

Սոցիալ-տնտեսական կարգավիճակի բաղադրիչները քննարկելիս առաջին հերթին ուրվագծվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատման հնարավորությունները: Սոցիոլոգիական չափման մեթոդների օգնությամբ ամրագրված սուբյեկտիվ գնահատականներն առավել իրատեսական են և ընկալվում են որպես սոցիալական իրականության համալիր արտացոլում:

Շեղիմակը նշում է, որ սուբյեկտիվ գնահատականների օգտագործումը սոցիոլոգիական, մասնավորապես սոցիալ-տնտեսական կարգավիճակի չափմանն ուղղված հետազոտություններում անհրաժեշտ է, քանի որ հնարավորություն է տալիս ստանալու օբյեկտիվ, բազմակողմանի տեղեկություններ:

Այսպիսով, հաշվի առնելով նորմատիվ և հարաբերական մոտեցումների առանձնահատկությունները և հայ հասարակության մեջ միջին խավի ուսումնասիրության ոչ բավարար մակարդակը, համադրվել են այս երկու մոտեցումները: Սուբյեկտիվ գնահատականների և ինքնանույնականացման վրա հիմնվող հարաբերական մոտեցումը հնարավորություն տվեց բացահայտելու արդի հայ հասարակության մեջ միջին խավի հետ իրենց նույնականացնող մարդկանց տեսակարար կշիռը և պարզելու միջին խավի հետ

ինքնանույնականացման իրական հիմքերը: Իսկ նորմատիվ մոտեցման կիրառումը հնարավորություն տվեց գտելու հարաբերական մոտեցման շնորհիվ ստացված համախմբությունը՝ համապատասխանեցնելով հասարակության մեջ միջին խավի գործառույթային նշանակությամբ պայմանավորված չափորոշիչային պահանջներին:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Հայաստանում ձևավորված միջին խավի բնութագրը. սոցիոլոգիական վերլուծություն»**, բաղկացած է չորս ենթագլուխներից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Սոցիալական կառուցվածքի փոխակերպումները և սոցիալական շարժունությունը հետխորհրդային Հայաստանում. միջին խավի ձևավորման գործընթացը»**, ներկայացվում են Խորհրդային Հայաստանի բնակչության դասակարգային կառուցվածքը, առանձնացվում են այն գործոնները, որոնք ազդեցին Խորհրդային Միության փլուզումից հետո հայաստանյան հասարակության սոցիալական կառուցվածքի ձևավորման վրա: Առավել մանրամասնորեն են քննարկվում միջին խավի ձևավորմանը նպաստող գործոնները:

Ենթագլխում վերլուծված են հետխորհրդային հայ հասարակության սոցիալական կառուցվածքի փոխակերպումներն ուղեկցող գործընթացները: 1990-ական թթ. բարեփոխումները, պետական գույքի սեփականաշնորհումը, իշխանական հարաբերությունների փոփոխությունը հանգեցրին սեփականության և մասնագիտական բնութագրիչների վրա հիմնված սոցիալական նոր տարբերակման: Այս ամենն արտահայտվեց հասարակության նոր խավերի ձևավորման, սոցիալական անհավասարության հիմքերի փոփոխման և բնակչության շերտավորման գործընթացներում: Առաջացավ տնտեսության մասնավոր հատվածը, որը ենթարկվում էր շուկայական օրենքների անվերահսկելի կարգավորմանը, աճեց հորիզոնական և ուղղահայաց սոցիալական շարժունությունը, փոխվեց սոցիալական կարգավիճակի բաղադրիչների հարաբերական կարևորությունը²:

Խորհրդային Միության փլուզման հետևանքով արմատապես փոխվեց Հայաստանի սոցիալական կառուցվածքը: Տնտեսական հարաբերությունների փոփոխության հետևանքով ստեղծվեցին նախադրյալներ բնակչության ուրբանիզացված միջին խավի ձևավորման համար, որն ունի առանձնահատուկ սպառողական վարք, ապրելակերպ, արժեհամակարգ և քաղաքական նախապատվություններ:

Հեղինակն առանձնացնում է Հայաստանում միջին խավի ձևավորման գործընթացում կարևոր դեր կատարած հետևյալ գործոնները.

- հարուստների (իշխող կամ վերին խավի), մասնավորապես այսպես կոչված «օլիգարխների» սեփական տնտեսական դիրքերի կայունացման պահանջով պայմանավորված տնտեսական գործունեությունը,
- միջազգային կազմակերպությունների գործունեությունը,
- պետական ապարատի պաշտոնյաների լայն ցանցի ստեղծումը,

² St' u Тихонова Н. Е. Социальная структура современной России // Свободная мысль, 2007, №11, էջ 43:

- սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու լայն հնարավորությունները,
- տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և տարածումը Հայաստանում, որոնք ոչ միայն նոր տիպի բարեկեցության հիմք են, այլև վաստակելու նոր հնարավորություններ են ապահովում,
- քաղաքացիական հասարակության ձևավորումը:

Այսպիսով, Հայաստանում վերոհիշյալ գործընթացների հետևանքով առանց պետության նպատակային միջամտության և վերահսկողության ձևավորվել է միջին խավ:

Ստենախոսության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Հայաստանում ձևավորված միջին խավի բնութագիրը, օբյեկտիվ ցուցիչներ և սուբյեկտիվ գնահատականներ»**, հեղինակը արդի հայ հասարակության մեջ միջին խավի տեսակարար կշիռը պարզելու նպատակով համադրում է հայաստանյան հասարակության վերաբերյալ վիճակագրական տվյալները միջին խավի սուբյեկտիվ գնահատականների հետ:

Հայաստանցիների հասարակական գիտակցության մեջ դեռևս չկա միջին խավի վերաբերյալ ձևավորված միասնական պատկերացում: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ աճում են ՀՀ համախառն ներքին արդյունքը, միջին ամսական աշխատավարձը, սահմանված նվազագույն աշխատավարձը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 2010 թվականին ապահովել է բյուջետային եկամուտների անհրաժեշտ մակարդակը և գերակատարել է ծրագրային ցուցանիշները: Այս տվյալները, հեղինակի կարծիքով, կարևոր պատրոշիչ բնույթ ունեն. վկայում են հարկերի հավելաձի շարժունության և հետևաբար միջին խավի կայունացման մասին:

Հեղինակը կարևորում է աղքատության պարենային, ընդհանուր և վերին ընդհանուր գծերի փոփոխության վերաբերյալ տվյալները: Աղքատության մակարդակը 2004-2010թթ. ընթացքում նվազել է՝ 54%-ից իջել է մոտ 36%-ի: «Ոչ աղքատները», 2010 թ. վիճակագրական տվյալների համաձայն, հայ հասարակության 64.2%-ն էր³: «Ոչ աղքատ» խմբի առանձնացումը հիմնվում է միայն եկամտի բնութագրիչի վրա, բովանդակային այլ բնութագրիչներ վերլուծված չեն:

Հեղինակը համադրել է օբյեկտիվ ցուցիչները և սուբյեկտիվ գնահատականները՝ մի կողմից, կարծրատիպերից ձեռքազատվելու, իսկ մյուս կողմից, միջին խավի հետ իրենց նույնականացնելու հարցվողների հոգեբանական ձգտումը չեզոքացնելու նպատակով: ՀՀ-ում 2012 թվականի փետրվարին մեր իրականացրած զանգվածային հարցման ընթացքում կիրառվեց սցիալ-տնտեսական կարգավիճակի սուբյեկտիվ գնահատման եղանակը, որի արդյունքների համաձայն՝ հայաստանյան հասարակության 61.4%-ը իրեն

³ Տնտեսական ճգնաժամն ու աղքատության պատկերը, աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2012թթ. / http://www.armstat.am/file/article/poverty_2011a_2.pdf, էջ 36 (09.09.2012թ., ժ. 21:50):

դասում է միջին խավին⁴: Սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականների համադրման շնորհիվ միջին խավ է համարվել հասարակության այն հատվածը, որը համապատասխանում է միջին խավին ինչպես օբյեկտիվ եկամտային չափանիշներով, այնպես էլ սուբյեկտիվ ինքնանույնացման չափանիշներով: Վերոհիշյալ 61.4%-անոց խմբից հեղինակը առանձնացրել է հարցվողների այն հատվածը, որի եկամուտների չափը աղքատության վերին ընդհանուր գծից ցածր է: Արդյունքում ստացվեց միջին խավի գտված պատկեր. Հայաստանում օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներին համապատասխանող միջին խավը 49.12% է:

Հետազոտական տվյալները հստակ կորելյացիա են ցույց տալիս հարցվողների կրթական մակարդակի և շերտավորման համակարգում նրանց դիրքի սուբյեկտիվ գնահատականի միջև: Միջին խավի հետ իրենց նույնականացնող հարցվողների համամասնությունը աճում է կրթական մակարդակին ուղիղ համեմատական: Նման օրինաչափություն է նկատվում նաև աշխատանք ունեցող և աշխատանք չունեցող հարցվողների պատասխանները համեմատելիս: Հարցվողի տարիքը նույնպես ազդում է հասարակության հիերարխիկ համակարգում իր դիրքի ինքնագնահատականների վրա: Որքան ավելի բարձր է հարցվողի տարիքը, այնքան բարձր է բարեկեցության մակարդակը ցածր գնահատելու միտումը: Գենդերային տարբերությունները և գենդերային շերտավորման գործոնները նույնպես ազդում են հարցվողների սուբյեկտիվ գնահատականների վրա. արական սեռի ներկայացուցիչները ավելի հակված են իրենց հարուստ կամ հարուստների և միջին խավի միջև հայտնված խմբում դասելու:

Միջին խավի մեջ ընդգրկվելու և հասարակության սոցիալական համակարգում սոցիալական և տնտեսական առաջընթաց ապահովելու համար հիմնարար կարևորություն ունեն կրթությունը և զբաղվածությունը: Այս դասական բնութագրիչներին ավելանում է նաև միջին խավի ներկայացուցիչների կողմից սեփական կյանքում բավական երկար ժամանակահատվածում կայուն առաջընթացի գիտակցման գործոնը:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Հայաստանում ձևավորված միջին խավի տնտեսական բնութագիրը. սպառողական վարք, ընտանեկան բյուջե, եկամուտների ու ծախսերի կառուցվածք»**, ներկայացված են Էմպիրիկ տվյալներ միջին խավի զբաղվածության առանձնահատկությունների, եկամուտների աղբյուրների և չափի, ծախսերի կառուցվածքի և սպառողական վարքի վերաբերյալ:

Ատենախոսության շրջանակում իրականացված հետազոտության արդյունքներից պարզ դարձավ, որ Հայաստանում իրենց միջին խավի ներկայացուցիչ համարող չափահասների 52.8%-ը աշխատում է: Միջին խավի զբաղված ներկայացուցիչների 31.8%-ը համատեղում է հիմնական աշխատանքը այլ զբաղվածության հետ:

⁴ Ըստ 2012 թ. փետրվարին ՀՀ-ում հեղինակի մասնակցությամբ իրականացված զանգվածային հարցման տվյալների: Ընտրանքի ծավալը՝ 1200 հոգի, ներկայացուցչականության սխալը՝ 5%:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ բավական բարձր է հարցվածների բավարարվածության մակարդակը հիմնական աշխատանքից: Միջին խավի ներկայացուցիչների 57.6%-ը մասնագիտական գործունեության ընթացքում աստիճանաբար աշխատանքային առաջընթաց է ունեցել, 5.6%-ը կտրուկ աշխատանքային առաջընթաց, 35.1%-ը աշխատանքային առաջընթաց չի ունեցել, և միայն 1.2%-ն է աստիճանաբար կարիերայի անկում ապրել, 0.5% դժվարացել են պատասխանել: Ստացված տվյալները վկայում են միջին խավի ներկայացուցիչների կարիերայի կայուն աճի մասին:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ միջին խավի յուրաքանչյուր ընտանիք (չորս հոգուց բաղկացած) ունի միջին հաշվով եկամտի երեք աղբյուր: Ինչպես և ենթադրում է միջին խավին պատկանելությունը, այդ ընտանիքներում եկամտի հիմնական աղբյուր է մշտական հաստիքով աշխատելու դիմաց ստացվող աշխատավարձը (68.4%): Այս փաստը շեշտում է ինչպես եկամտի կայունության, այնպես էլ մասնագիտական գործունեության շնորհիվ եկամուտ ստանալու հանգամանքը:

Ինչ վերաբերում է միջին խավի եկամուտներին, ապա Երևանում և մարզերում միջին եկամտի չափն էսպես տարբերվում է, ինչը պայմանավորված է սպառման, բնամթերքի օգտագործման հնարավորությունների և կենսամակարդակի առանձնահատկություններով: Այսպես, ՀՀ մարզերում բնակվող չորս հոգուց բաղկացած միջին խավի ընտանիքի միջին ամսական եկամուտը 336150 ՀՀ դրամ է: Մինչդեռ Երևանում բնակվող չորս հոգուց բաղկացած միջին խավի ընտանիքի միջին ամսական եկամուտը կազմում է 794590 ՀՀ դրամ: Այս եկամուտը ստացվում է միջինում երեք եկամտի աղբյուրներից, իսկ ընտանիքի չափահաս աշխատունակ անդամները որոշ դեպքերում բազմակի զբաղվածություն ունեն:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Հայաստանում ձևավորված միջին խավի սոցիալական բնութագիրը. ինքնություն և վարքային առանձնահատկություններ»**, վերլուծված են հայաստանյան միջին խավի ներկայացուցիչների վերաբերմունքը սոցիալական ինստիտուտների գործառնմանը, նրանց քաղաքական դիրքորոշումներն ու մասնակցությունը, ինչպես նաև արժեքային դիրքորոշումներն ու քաղաքացիական մասնակցությունը երկրում ընթացող գործընթացներին:

Իրականում միջին խավի ծավալները հասարակության կայունության ցուցանիշն են: Սակայն ինքնին միջին խավի էական ծավալները դեռևս բավարար չեն հասարակությունը որպես կայուն բնութագրելու համար:

Հետազոտության տվյալները վկայում են, որ միջին խավի ներկայացուցիչները առավել բավարարված են կյանքի որակի այն բաղադրիչներով, որոնք ի վիճակի են ինքնուրույն ապահովելու, իսկ երբ խոսքը հասարակության կողմից սոցիալական երաշխիքների և իրավական հարաբերությունների կարգավորման մասին է՝ մասնավորապես իրավունքների պաշտպանության, ապա բավարարվածության մակարդակը էսպես ցածր է: Հեղինակը եզրակացնում է, որ ժամանակակից հայաստանյան հասարակության մեջ միջին խավի ներկայացուցիչները վստահ են սեփական ուժերի և

կարողությունների վրա, որոնք կերպաշխավորեն իրենց համար կյանքի պատշաճ որակ ապահովելու, սեփական ուժերով սեփական բարեկեցությունը ապահովելու հնարավորությունները: Սակայն հասարակության կողմից միջին խավի ներկայացուցիչների համար բարեկեցության պատշաճ մակարդակ ապահովելու ռազմավարական քայլերը միջին խավի ներկայացուցիչները բավարար չեն համարում:

Բնականաբար, նման իրավիճակը սերտորեն կապված է հասարակության սոցիալական ինտիտուտների գործառնման հետ: Այն մասնավորապես նկարագրվում է տարբեր սոցիալական ինտիտուտների և կառույցների նկատմամբ միջին խավի ներկայացուցիչների վստահության մակարդակի ցուցանիշներով:

Որպես հասարակության «ողնաշար»՝ միջին խավը կոչված է մասնակցելու ժողովրդավարական գործընթացներին և մասնավորապես քաղաքական որոշումների ընդունմանը: Ժողովրդավարական երկրներում վերջինս իրականացվում է ընտրություններին մասնակցության միջոցով: Հայաստանում միջին խավի ներկայացուցիչների 72.3%-ն է մասնակցել 2008 թվականի նախագահական ընտրություններին, 58.8%-ը մասնակցել է 2007 թվականի ԱԺ ընտրություններին, 59.0%-ը՝ ՏԻՄ վերջին ընտրություններին:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ միջին խավի ներկայացուցիչների 12.1%-ն է որևէ քաղաքական կուսակցության անդամ, ընդ որում 5.4%-ը ՀՀԿ անդամ է, 2.3%-ը՝ ԲՀԿ, 1.1%-ը՝ ՀՅԴ, 1.1%-ը՝ ՕԵԿ, 0.8%-ը՝ ՏԺառանգություն!, 0.6%-ը՝ ՀԱԿ, 0.3%-ը՝ ՀԺԿ, 0.3%-ը՝ Կոմունիստական և 0.2%-ը այլ կուսակցությունների անդամ են: Այսուհանդերձ, միջին խավի ներկայացուցիչները համարում են, որ նոր՝ միջին խավի շահերն արտահայտող քաղաքական ուժի անհրաժեշտություն չկա:

Միջին խավի ներկայացուցիչները, ընդհանուր առմամբ, համաձայն չեն ՀՀ տարբեր ոլորտներում վարվող քաղաքականությանը, մասնավորապես՝ արտաքին քաղաքականությանը (48.3%-ը), տնտեսական քաղաքականությանը (64.1%-ը) և սոցիալական քաղաքականությանը (63.0%-ը): Ընդ որում, համեմատաբար ավելի բարձր է միջին խավի ներկայացուցիչների համաձայնության մակարդակը ՀՀ արտաքին քաղաքականությանը (43.7%-ը):

Այս պարագայում տրամաբանական է, որ միջին խավի ներկայացուցիչների 54.5%-ը համարում է, որ բոլորովին չի մասնակցում երկրում որոշումների ընդունմանը: Սակայն միջին խավի ներկայացուցիչները բավական անտարբեր դիրքորոշում ունեն. երկրում որոշումների ընդունմանը մասնակցելու ցանկություն միանշանակ ունի միջին խավի ներկայացուցիչների միայն 18.0%-ը:

Հեղինակի կարծիքով, վերոնշյալ տվյալները վկայում են այն մասին, որ հայաստանյան միջին խավի ներկայացուցիչները չեն ընկալում իրենց որպես միասնական արժեհամակարգով և գաղափարախոսությամբ միաբանված սոցիալական միավոր:

Հետազոտության արդյունքները միանշանակ պատկերացում են տալիս նաև հայաստանյան միջին խավի արժեհամակարգի բաղադրիչների դասավորվածության վերաբերյալ: Միջին խավի արժեհամակարգում առաջին

տեղում է ընտանեկան երջանկությունը, երկրորդում՝ շրջապատի հարգանքը, երրորդում՝ ֆինանսական հաջողությունը, չորրորդում՝ մասնագիտական առաջխաղացումը, իսկ հինգերորդում՝ ազատ ժամանցը:

Միջին խավի սպասելիքները սեփական ճակատագրի վերաբերյալ շատ ավելի լավատեսական են, քան ընդհանուր հասարակության, պետության զարգացման հեռանկարների վերաբերյալ դիրքորոշումն է: Սա բացատրվում է նրանով, որ միջին խավի ներկայացուցիչների զգալի հատվածը հակված է Հայաստանից արտագաղթելու, միջին խավի միայն 28.0%-ն է արտագաղթելու վերաբերյալ հայտնել հստակ բացասական դիրքորոշում:

Այսպիսով, մենք գործ ունենք տնտեսական և գործառնական առումով կայացած, հասարակության 49.12%-ը կազմող միջին խավի հետ, որը պատրաստ է վճարելու հարկերը, սակայն միաբանված չէ, չի մասնակցում երկրում որոշումների կայացման գործընթացին, չի նույնացնում իր ապագան երկրի ապագայի հետ, և ամենամտահոգիչն այն է, որ միջին խավի զգալի հատվածը պատրաստ է արտագաղթելու Հայաստանից:

Էմպիրիկ հետազոտության տվյալներից ելնելով՝ հեղինակը եզրակացնում է, որ այսօր հասունացել է միջին խավի ձևավորմանը, կայունացմանը, պահպանմանը և զարգացմանն ուղղված սոցիալական քաղաքականության համալիր միջոցառումների մշակման և իրականացման պահանջ:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Միջին խավի կայուն ընդլայնված վերարտադրության ապահովումը՝ որպես սոցիալական խնդիր Հայաստանի Հանրապետությունում»**, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Միջին խավի զարգացման միտումները հետխորհրդային Հայաստանում. միջին խավի դիֆուզիայի և համալրման գործոնների համեմատական վերլուծություն»**, ներկայացված են Հայաստանում միջին խավի վերին և ստորին խորհրդանշական սահմանները, վերլուծված են միջին խավից դուրս մղվելու հիմնական ռիսկերը:

Ընդհանրացնելով միջին խավի ստորին շեմի վերլուծության արդյունքները՝ հեղինակն առանձնացնում է ՀՀ-ում միջին խավի վերարտադրմանը խոչընդոտող հետևյալ կարևորագույն գործոնները.

- Բարձրագույն և մասնագիտական կրթության սահմանափակ մատչելիությունը,
- առողջապահական ծառայությունների սահմանափակ մատչելիությունը,
- կայուն աշխատատեղերի պակասը,
- փոքր և միջին բիզնեսի զարգացման սահմանափակ հնարավորությունները,
- գյուղատնտեսությամբ զբաղվելու բարձր ռիսկայնությունը,
- աշխատանքի ցածր վարձատրությունը,
- ցածր կենսաթոշակները,
- բնակարանային ապահովության համակարգի բացակայությունը, բնակարանների անմատչելիությունը,
- երեխաներ ունեցող ընտանիքներին աջակցության համակարգի անկատարությունը,
- սոցիալական ծառայությունների հանրային ցանցի զարգացման ոչ բավարար

մակարդակը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Միջին խավի ձևավորման գործընթացի սոցիալական կարգավորման փորձերը հետխորհրդային Հայաստանում. նպաստակներ, միջոցներ ու արդյունքներ»**, ներկայացված են հետխորհրդային Հայաստանում սոցիալական կառուցվածքի կառավարման փորձերը:

ՀՀ կառավարության մշակած «Արքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը»⁵ (2003-2007թթ.) և հետագայում լրամշակված և վերանվանված «Գայուն զարգացման ծրագիրը»⁶ (2008-2021թթ.) ներառում են սոցիալական կառուցվածքի կառավարման տեխնոլոգիաներ: Արքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նպատակը մի կողմից եկամտային աղքատության և անհավասարության կրճատումն է, մյուս կողմից՝ մարդկային աղքատության հաղթահարումը:

Գայուն զարգացման ծրագիրը սահմանեց ավելի հստակ նպատակներ՝ պահպանելով հանդերձ բնակչության բարեկեցության աճի և աղքատության հաղթահարման, ներառյալ՝ ծայրահեղ աղքատության վերացման գերակայությունները:

Սակայն նշված գործողություններն ու միջոցառումները բավարար չեն միջին խավի զարգացումը կառավարելու համար: Անհրաժեշտ է փոխել ծրագրի ուղղվածությունը՝ շեշտը դնելով միջին խավի համալրման և զարգացման վրա, որն անխուսափելիորեն ենթադրում է նաև բովանդակային փոփոխություններ:

Միջին խավին ուղղված գիտականորեն հիմնավորված և հասարակության հրատապ կարիքներին համապատասխանող հավասարակշռված սոցիալական քաղաքականության բացակայության պայմաններում ներկայիս հայաստանյան հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները կարող են վտանգել հասարակության կայունացման գործընթացները: Միջին խավի վերարտադրմանը և զարգացմանը խոչընդոտում է պետական կարգավորման ժամանակակից տեխնոլոգիաների ու զարգացման հստակ ուղղվածության բացակայությունը:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Սոցիալական շարժունության ակտիվացման հնարավորությունները և միջին խավի դիֆուզիայի հաղթահարման ուղիները արդի հայ հասարակությունում»**, ներկայացված են արդի Հայաստանում միջին խավի ձևավորմանը և զարգացմանը նպաստող սոցիալական քաղաքականության միջոցառումների առաջարկները:

Ժամանակակից հայաստանյան հասարակության սոցիալական կառուցվածքի նկարագրված շարժունությունը համառոտ են պահանջում է պետության կողմից շերտավորման գործընթացների կառավարում: Այն պետք է ուղղված լինի կայուն հասարակության ձևավորմանը, որտեղ էական տեսակարար կշիռ կունենա միջին խավը: Միջին խավի ձևավորմանը, պահպանմանը և զարգացմանն ուղղված սոցիալական քաղաքականության և

⁵ Արքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Երևան, 2003 / http://www.logincee.org/remoted_libraryitem/12843?lang=ar (04.07.2012թ., ժ. 12:16):

⁶ Գայուն զարգացման ծրագիր, հավելված ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման, Երևան, 2008 / <http://www.gov.am/files/docs/165.pdf> (04.07.2012թ., ժ. 12:25):

տնտեսական միջոցառումների մշակումը կապահովի հասարակության կայունություն: Նշված բովանդակային միջոցառումներին համընթաց՝ անհրաժեշտ է իրականացնել նաև միջին խավի տարբեր խմբերի համապատասխան կերպարի ձևավորմանն ուղղված միջոցառումներ՝ հասարակության մեջ նրանց դերի արժևորման և գործունեության ու ապրելակերպի ընդունելի արդյունավետ մոդելների տարածման նպատակով:

Ենթացվախում հեղինակը մշակել է Հայաստանում միջին խավի ձևավորման, կայունացման, պահպանման և զարգացման ուղղությամբ ռազմավարական առաջարկություններ, որոնք ուղղված են սոցիալական բևեռացման կանխմանը և հասարակության տարբեր շերտերի վերընթաց սոցիալական շարժունության խթանմանը՝ բնակչության ներուժի զարգացման շնորհիվ:

Հեղինակի կարծիքով, կառավարության գործունեության առաջնահերթ խնդիր է միջին խավի համար աշխատատեղերի ստեղծումը և աշխատողների սոցիալական պաշտպանության համակարգի զարգացումը, միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիության ապահովումը: Արդար փոխհատուցմամբ և կայուն եկամտով բարձրորակ աշխատատեղերի հասանելիությունը առանցքային գործոն է ուժեղ միջին խավ ձևավորելու հարցում:

Զբաղվածության ապահովմանը և աշխատատեղերի ստեղծմանը զուգընթաց՝ առաջ է գալիս այնպիսի խնդիր, ինչպիսին է աշխատանքային պարտականությունների և ընտանիքի անդամներին (երեխային, տարեցին, հաշմանդամին) խնամելու պարտականությունների համադրման և հավասարակշռման գործում միջին խավի ընտանիքներին պետության աջակցությունը:

Բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի մշակումը կապահովի միջին խավի կայուն զարգացման համար նախապայմաններ: Դրանք պետք է ուղղված լինեն ինչպես միջին խավին արտոնյալ պայմաններով հիպոթեկային վարկավորմանը, այնպես էլ բնակարանաշինության և բնակարանների տրամադրման չափանիշների մշակմանը:

Կենսաթոշակային տարիքի մարդկանց սոցիալական ապահովությունը նույնպես նպաստում է միջին խավի կայունությանը՝ կանխարգելելով տարիքի, առողջական խնդիրների և անաշխատունակության պատճառով միջին խավից ներքև աղքատ խավում հայտնվելու ռիսկերը:

Առողջապահական ծառայությունների անմատչելիությունը միջին խավից դուրս մղվելու ամենառիսկային գործոններից է: Այս պարագայում հարկ է նշել միջին խավի ձևավորման, պահպանման և զարգացման գործում բժշկական ծառայությունների մատչելիության և առողջապահական համակարգի լուրջ բարեփոխման անհրաժեշտությունը:

Միջին խավի գոյության և զարգացման ռիսկերը հայ հասարակության մեջ կապված են նախ և առաջ միջին խավի միասնական ինքնության և գաղափարախոսական հենքի պակասի հետ: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է աջակցել միջին խավի ինքնության ձևավորմանը: Առանց հստակ

նպատակադրման, ինքնության գիտակցման և հայրենասեր դիրքորոշման՝ հնարավոր չէ միջին խավի միաբանումն ու զարգացումը:

Վերոհիշյալ գործիքների և միջոցառումների համալիր մշակումն ու իրականացումը կատեղծի սոցիալական երաշխիքներ միջին խավի ընտանիքների կայունության համար՝ տարածվելով ոչ միայն միջին խավի ընտանիքների, այլև հասարակության ավելի անապահով խավի վրա, որը միջին խավ բարձրանալու հնարավորություններ կստանա:

Ատենախոսության **եզրակացություն** մեջ ներկայացված է ատենախոսության ամփոփումը. կատարված եզրահանգումներից առանձնացվում են հետևյալները.

- Հայաստանում միջին խավի ձևավորման սոցիալ-տնտեսական գործոնների ուսումնասիրության համար առավել նպատակահարմար է կիրառել սոցիալական շերտավորման վերաբերյալ Մ.Վեբերի դրոյթները և նորվեբերյան ուղղության սոցիոլոգների հայեցակարգերը: Նորվեբերյան մոտեցումների համար առանցքային են կրթության, զբաղվածության և սեփականության չափանիշները, որոնք որոշում են մարդկանց հնարավորությունները շուկայում և նրանց ինքնանույնացման առանձնահատկությունները:
- «Սոցիալական խավ» հասկացությունը շերտավորման վերլուծության տեսանկյունից ունի հիմնարար նշանակություն: Այն մատնանշում է, որ սոցիալական խավի գոյության համար մեծ նշանակություն ունի անհատական գործոնը:
- Հաշվի առնելով միջին խավի ուսումնասիրության նորմատիվ և հարաբերական մոտեցումների առանձնահատկությունները և հայ հասարակության մեջ միջին խավի ուսումնասիրվածության ոչ բավարար մակարդակը հակված ենք այն եզրահանգմանը, որ արդի հայ հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ միջին խավի առանձնացման և ուսումնասիրման նպատակով առավել նպատակահարմար է այս երկու մոտեցումների համադրումը:
- 1990-ական թթ. բարեփոխումները, պետական գույքի սեփականաշնորհումը, իշխանական հարաբերությունների վերաբաշխումը հանգեցրեցին սեփականության և մասնագիտական բնութագրիչների վրա հիմնված սոցիալական նոր տարբերակման: Հայաստանում վերոհիշյալ գործընթացների հետևանքով ձևավորվեց միջին խավ, որը, սակայն, ձևավորվել է ինքնաբուխ, տարբայնորեն և առանց պետության նպատակային միջամտության և կարգավորման:
- Միջին խավի մեջ ընդգրկվելու և հասարակության սոցիալական համակարգում սոցիալական և տնտեսական առաջընթաց ապահովելու համար հիմնարար կարևորություն ունեն կրթությունը և զբաղվածությունը: Այս դասական բնութագրիչներին ավելանում է նաև միջին խավի ներկայացուցիչների կողմից սեփական կյանքում բավական երկար ժամանակահատվածում տեղի ունեցած կայուն առաջընթացի գիտակցման գործոնը:
- ՀՀ մարզերում բնակվող չորս հոգուց բաղկացած միջին խավի ընտանիքի միջին ամսական եկամուտը կազմում է 336150 ՀՀ դրամ: Մինչդեռ Երևանում

բնակվող չորս հոգուց բաղկացած միջին խավի ընտանիքի միջին ամսական եկամուտը 794590 ՀՀ դրամ է:

- Միջին խավի ներկայացուցիչների սպասելիքները շատ ավելի լավատեսական են իրենց ճակատագրի, քան ընդհանուր հասարակության և պետության զարգացման հեռանկարների վերաբերյալ: Մենք ունենք տնտեսական և գործառնական առումով կայացած, հասարակության 49.12% կազմող միջին խավ, որը պատրաստ է վճարելու հարկերը, սակայն միաբանված չէ, չի մասնակցում երկրում որոշումների կայացման գործընթացին, չի նույնացնում իր ապագայի հեռանկարները երկրի ապագայի հետ, իսկ ամենամտահոգիչն այն է, որ միջին խավի զգալի հատվածը պատրաստ է արտագաղթելու Հայաստանից (շուրջ 72%-ը):
- Ընդհանրացնելով միջին խավի վերլուծության արդյունքները՝ կարելի է առանձնացնել ՀՀ-ում միջին խավի վերարտադրմանը խոչընդոտող հետևյալ կարևորագույն գործոնները. ա) բարձրագույն և մասնագիտական կրթության սահմանափակ մատչելիությունը, բ) առողջապահական ծառայությունների սահմանափակ մատչելիությունը, գ) կայուն աշխատատեղերի պակասը, դ) փոքր և միջին բիզնեսի զարգացման սահմանափակ հնարավորությունները, ե) գյուղատնտեսությամբ զբաղվելու բարձր ռիսկայնությունը, զ) ցածր վարձատրությունը, է) ցածր կենսաթոշակները, ը) բնակարանային ապահովության համակարգի բացակայությունը, բնակարանների անմատչելիությունը, թ) երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության համակարգի անկատարությունը, ժ) սոցիալական ծառայությունների հանրային ցանցի զարգացման ոչ բավարար մակարդակը:
- ՀՀ կառավարությունը աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի միջոցով (Աղքատության հաղթահարման ծրագիր, Կայուն զարգացման ծրագիր) ձեռնամուխ է եղել սոցիալական կառուցվածքի կարգավորմանը և անուղղակիորեն նաև միջին խավի ընդլայնված վերարտադրմանը խոչընդոտող գործոնները մեղմելուն, և ծայրահեղ աղքատության ծավալների կրճատման տեսանկյունից հասել է որոշակի դրական արդյունքների: Այս միջոցառումներին զուգահեռ՝ անհրաժեշտ է մշակել միջին խավին անմիջականորեն նպատակաուղղված սոցիալական քաղաքականություն:
- Կառավարության գործունեության մեջ առաջնահերթ խնդիր է միջին խավի համար աշխատատեղերի ստեղծումը և աշխատողների սոցիալական պաշտպանության համակարգի զարգացումը, որի իրագործման համար անհրաժեշտ է հետևյալ գործիքների կիրառումը. ա) միջնակարգ-մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիության ապահովում, բ) արդար փոխհատուցմամբ և կայուն եկամտով աշխատատեղերի հասանելիություն, գ) աշխատանքային պարտականությունների և ընտանիքի անդամներին (երեխային, տարեցին, հաշմանդամին) խնամելու պարտականությունների համադրման և հավասարակշռման գործում միջին խավի ընտանիքներին պետության աջակցություն, դ) բնակարանային ապահովության ուղղությամբ ծրագրերի մշակում, ե) կենսաթոշակային տարիքի մարդկանց սոցիալական ապահովություն, զ) բժշկական

ծառայությունների մատչելիություն և առողջապահական համակարգի բարեփոխումներ, է) միջին խավի սոցիալական ինքնության և միաբանության հնարավորությունների ստեղծում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Մելքումյան Յու. Գ.**, Միջին դասի ձևավորման տեխնոլոգիաների զարգացման հեռանկարները Հայաստանում // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2012, հ. 2-3 (634-635), էջ 266-276:
2. **Մելքումյան Յու. Գ.**, Միջին խավի առկայության հարցը Հայաստանում // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2011, հ. 4 (632), էջ 133-139:
3. **Մելքումյան Յու. Գ.**, Բնակչության բարեկեցության մակարդակի սուբյեկտիվ գնահատականների կառուցման մեխանիզմները // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2011, հ. 1-2 (630), էջ 197-204:
4. **Մելքումյան Յու. Գ.**, Միջին խավը Հայաստանում (քանակական վերլուծություն և հիմնական բնութագրիչներ) // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, ՀՀ ԳԱԱ, 2010, հ. 3 (629), էջ 191-205:
5. **Мелкумян Ю. Г.** Социологические подходы к измерению среднего класса (характеристики среднего класса РА на современном этапе) // Вестник общественных наук. Ереван: НАН РА, 2010. - № 1-2(627-628) , стр. 226-233.

СРЕДНИЙ СЛОЙ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ: ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.03 - «Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы».

Защита состоится 22-ого февраля 2013 г. в 15:00 часов на заседании Специализированного совета 013 Философии и социологии ВАК РА при Ереванском государственном университете.

Адрес: 0025, г. Ереван, ул. Абовяна 52а.

РЕЗЮМЕ

Изменения социальной структуры постсоветской Армении были спонтанными и динамичными. Целью проведенных в этот период многочисленных стратификационных исследований было изучение процесса поляризации армянского общества, особенностей формирования элиты и слоя бедных. Эти исследования имели важное прикладное значение, обеспечили богатый эмпирический материал, однако не предполагали теоретической концептуализации. А характеристики и функциональное значение спонтанно сформировавшегося среднего слоя не рассматривались, в принципе. Сегодня актуальной задачей является изучение и теоретическое осмысление среднего слоя в современной Армении. Слой общества, выполняющий предписанные среднему слою социальные функции по стабилизации и гармонизации общества, сформировался без целенаправленного государственного участия. Актуальной научной задачей является анализ особенностей формирования среднего слоя в Армении, его характеристик, основных функций и показателей существования, а также выявление рисков исключения из среднего слоя. Актуальность данной диссертации заключается в разработке адекватных мер социальной политики, направленных на формирование, стабилизацию и развитие среднего слоя.

Научная новизна данной диссертации состоит в типологизации социологических подходов, определяющих роль и место среднего слоя в социальной структуре. Показаны эвристические возможности и преимущества сопоставления объективных показателей и субъективных оценок при изучении среднего слоя.

Диссертационная работа состоит из трех глав. В первой главе «Теоретико-методологические подходы к изучению среднего слоя» автор анализирует классовый и стратификационный подходы к изучению среднего класса, обосновывает целесообразность применения неовеберовского подхода, выделяет основные характеристики и функции среднего слоя, акцентирует важность различных методологических подходов к изучению среднего слоя в современном армянском обществе: нормативного и релятивного.

Во второй главе «Характеристики сформировавшегося в Армении среднего слоя: социологический анализ» проанализированы особенности трансформации социальной структуры и формирования среднего слоя в постсоветской Армении.

В третьей главе «Обеспечение стабильного расширенного воспроизводства среднего слоя как социальная задача в Республике Армения» автор выделяет факторы, препятствующие воспроизводству среднего слоя в Армении, анализирует политику и практику воспроизводства среднего слоя в постсоветской Армении и разрабатывает предложения по целевой регуляции процесса воспроизводства среднего слоя в армянском обществе на современном этапе, акцентируя цели, инструменты и перспективы социальной политики.

Диссертация завершается заключением, в котором приводятся основные результаты и выводы исследования. В частности обосновывается применение концепций М. Вебера и неовеберянцев для анализа социальной структуры армянского общества. Неовеберянский подход основывается на критериях образования, занятости и собственности, которые обуславливают возможности человека в условиях рыночной экономики и особенности его самоидентификации. Целесообразность использования понятия «слой» имеет фундаментальное значение, поскольку указывает на важность личностного фактора в стратификационной системе.

По данным диссертационного исследования в современной Армении сформировался средний слой, соответствующий экономическим характеристикам и выполняющий предписанные ему функции, готовый выплачивать налоги, который, однако, не консолидирован, не осознает важность своего участия в принятии решений в стране, не идентифицирует перспективы своего будущего с будущим страны, а более всего беспокоит тот факт, что подавляющее большинство представителей среднего слоя готовы эмигрировать из Армении.

В диссертации выявлены следующие факторы, препятствующие воспроизводству среднего слоя в Армении: труднодоступность высшего и профессионального образования, недоступность медицинских услуг, отсутствие или недостаточные возможности стабильной занятости, ограниченные возможности развития малого и среднего бизнеса, высокие риски сельскохозяйственного производства для фермерских хозяйств, низкие заработные платы, низкие пенсии, отсутствие эффективной системы обеспечения жильем, несовершенство системы поддержки семей с несовершеннолетними детьми, недостаточный уровень развития системы социальных сервисов.

Все это свидетельствует о необходимости ориентации государственной социальной политики в направлении формирования, стабилизации и развития среднего слоя. В диссертационной работе разработаны рекомендации по созданию рабочих мест для представителей среднего слоя, обеспечению доступности среднего специального и высшего образования, созданию возможностей стабильного заработка, государственной поддержке семей среднего слоя, совмещающих работу и обязанности по уходу за членами семьи (детьми, пожилыми, инвалидами), развитию программ по обеспечению жильем, социальному обеспечению лиц пенсионного возраста, доступности системы здравоохранения, созданию условий для формирования идентичности и консолидации среднего слоя.

Middle stratum in modern Armenian society: basic characteristics and development perspectives

The dissertation for the degree of PhD in sociological science on the speciality 22.00.03 – “Middle range theories, social structures, social institutions and processes”

The defense will take place on 22 of February, 2013 at 15:00 at the meeting of the Philosophy and Sociology Special Board № 013 HAC of RA functioning at Yerevan State University.

Address: 0025, Yerevan, Abovyan 52a.

ABSTRACT

The changes of social structure in post-Soviet Armenia were spontaneous and dynamic. The purpose of numerous stratification researches in that period was to study the process of polarization of Armenian society, the features of formation of the elite and the poor stratum. These studies were highly applicable, provided a rich empirical data, but didn't result in theoretical conceptualization. And the characteristics and functional significance of spontaneously formed middle stratum was not considered at all. The study and the theoretical understanding of the middle stratum of modern Armenia is an actual problem in the scientific discurs of modern Armenia. The stratum of the society, performing the functions of social stabilization and harmonization prescribed to middle stratum, was formed without a purposeful participation of the government. An actual scientific task is the analyses of the characteristics of the formation of middle stratum in Armenia, its basic features, main functions, existence indicators and identification of exclusion risks from the middle stratum. The relevance of this dissertation is to develop adequate social policy instruments aimed at the formation, stabilization and development of the middle stratum.

The scientific novelty of this dissertation includes the typologization of sociological approaches, defining the role and state of the middle stratum in the social structure. Heuristic possibilities and advantages of combined use of objective measures and subjective assessments in the study of the middle stratum are indicated in this dissertation.

The dissertation consists of three chapters. In the first chapter, "Theoretical and methodological approaches to the study of middle stratum," the author examines the class and stratification approaches to the study of the middle stratum, substantiates the expediency of neoveberian approach, highlights key features and functions of the middle stratum, stresses the importance of normative and relative methodological approaches to the study of the middle stratum in the modern Armenian society.

In the second chapter, entitled "The characteristics of the middle stratum formed in Armenia: sociological analyses," the features of the transformation of the social structure and the formation of the middle stratum in post-Soviet Armenia have been analyzed.

In the third chapter, "The social problem of steady extended reproduction of the middle stratum in Republic of Armenia," the author highlights the obstacles to the reproduction of the middle stratum in Armenia, analyses the policies and practices of reproduction of middle stratum in post-Soviet Armenia, and develops proposals for targeted regulation of the reproduction process of the middle stratum in the modern Armenian society, emphasizing goals, tools and perspectives of social policy.

The dissertation is finalized with the conclusion where the main results and findings of the research are summarized. The application of Max Weber and the Neoweberians concepts to the analyses of social structure in the Armenian society is substantiated. Neoweberian approach is based on the criteria of education, employment, and property that stipulate the human potential and the characteristics of self-identification in a market economy. The feasibility of using the term "stratum" is of fundamental importance, since it indicates the importance of the personal factor in the stratification system.

According to the dissertation a middle stratum formed up in modern Armenia corresponds the basic economic characteristics and performs the functions assigned to it, being ready to pay the taxes, but which is not consolidated and is not aware of the importance of its participation in decision-making in the country, does not identify the perspectives for its future with the future of the country, and the biggest concern is the fact that the vast majority of the middle stratum are willing to emigrate from Armenia.

The dissertation identifies the following factors affecting the reproduction of the middle stratum in Armenia: difficulty in access to higher and vocational education, inaccessibility to health care services, the lack of stable employment opportunities, limited opportunities for small and medium-sized businesses, high risks of agricultural production, low wages, low pensions, lack of effective housing, inadequate support system for families with minor children, insufficient development of the social services.

Above mentioned indicate the necessity of the state social policy orientation towards the formation, stabilization and development of the middle stratum in Armenian society. The recommendations developed in this dissertation aim at the creation of jobs for the middle stratum, provision of the availability of secondary and higher education, stable wages, state support of the middle stratum families combining the work and responsibilities of taking care of family members (children, elderly, disabled), the development of housing programs, social support of retired, access to health care, creation of conditions for the formation of identity and the consolidation of the middle stratum.

